ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏՈՒՄ ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ՇԱԽՄԱՏԻ ՄՐՑԱՇԱՐ (ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ)

28.05.2021 16:14

ՀՀ փաստաբանների պալատում 2021 թվականի Մայիսի 27-ին փաստաբանների միջև տեղի է ունեցել շախմատի առաջնություն: Մրցաշարին մասնակցել են ավելի քան երեսուն փաստաբաններ:

Խաղը անց է կացվել շվեյցարական անհատական ձևաչափով, այն է՝ խաղը անցկացվում է յոթ փուլով, հավասար միավորներ ունեցողները խաղում են միմյանց դեմ: Առավելագույն խաղային միավոր ունեցողը ճանաչվում է հաղթող:

Խաղի հաղթողներ են ճանաչվել Մեժլումյան Կարենը (4-րդ հորիզոնական), Վարդապետյան Լևոնը (3-րդ հորիզոնական), Վարդանյան Արմենը (2-րդ հորիզոնական) և Ապրեսյան Ջոհրակը (1-ին հորիզոնական):

Հաղթողներին պատվոգրերով և մեդալներով պարգևատրել է ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Արա Ջոհրաբյանը:

Լավագույն 9 խաղացողներից ձևավորվել է ՀՀ փաստաբանների պալատի շախմատի հավաքական թիմը, որը սույն թվականի **մայիսի 29-ին**՝ ժամը 11:00-ին կմասնակցի Հայաստանի շախմատի ֆեդերացիայի և ակադեմիայի կողմից կազմակերպված **Հայաստանի կորպորացիաների միջև անց կացվող գրան-պրի մրցաշարին** Հայաստանի շախմատի ակադեմիայում /հասցե՝ ք. Երևան, Շևչենկո 34/:

ՀՀ փաստաբանների պալատի շախմատի հավաքական թիմը կներկայանա հետևյալ կազմով.

Rank	Name	FED	Pts	BH.
1	Ապրեսյան Ջոհրակ	ARM	6	28
2	Վարդանյան Արմեն	ARM	5½	26½
3	Վարդապետյան Լևոն	ARM	5½	23½
4	Մեժլումյան Կարեն	ARM	5	28½
5	Սահակյան Հայկ	ARM	5	25½
6	Շահմուրադյան Աշոտ	ARM	5	20½
7	Ամիրխանյան Սերգեյ	ARM	4½	29½
8	Ղարիբյան Հմայակ	ARM	4½	27½
9	Մարտիրոսյան Մարտիկ	ARM	4½	24½

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })